Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 4-ի N 1136 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 50 ՏՈԿՈՍՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների (այսուհետ՝ սուբյեկտ) կողմից արտադրվող ապրանքների (այսուհետ՝ արտադրանք) համար արտահանվող երկրի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներմուծման և (կամ) իրացման համապատասխանության սերտիֆիկատ կամ այլ համարժեք փաստաթուղթ (այսուհետ՝ սերտիֆիկատ) տալու համար կատարված ծախսերի պետական փոխհատուցման կարգը:

2. Սերտիֆիկատին համարժեք է համարվում այն փաստաթուղթը, որը սուբյեկտին իրավունք է տալիս իր արտադրանքը ներմուծելու տվյալ երկիր:

3. Չեն փոխհատուցվում այն երկրների կողմից տրամադրված սերտիֆիկատները, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունն ունի սերտիֆիկատների փոխադարձ ճանաչելիության մասին համաձայնագրեր:

4. Սույն կարգով փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն սուբյեկտների կատարած ծախսերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:

5. Սուբյեկտի կողմից սերտիֆիկատի ստացման համար կատարված ծախսերի 50 տոկոսով փոխհատուցում ստանալու նպատակով սուբյեկտը կարող է դիմել համապատասխան սերտիֆիկատի առկայության դեպքում:

6. Մեկ տարում սուբյեկտը կարող է փոխհատուցում ստանալ մեկ անգամ՝ տվյալ տարում ստացած սերտիֆիկատի համար ծախսած գումարի 50 տոկոսի չափով:

7. Սույն կարգի իմաստով փոխհատուցման ենթակա ծախսերը ներառում են՝

1) լաբորատոր փորձարկման համար կատարված ծախսերը.

2) սերտիֆիկատի ստացման համար կատարված ծախսերը:

8. Սուբյեկտը փոխհատուցում ստանալու նպատակով հայտ է ներկայացնում հիմնադրամի մարզային մասնաճյուղ կամ ներկայացուցչություն՝ համաձայն N 1 ձևի: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Հայտին կից անհրաժեշտ է ներկայացնել՝

1) սերտիֆիկացնող մարմնի կողմից տվյալ արտադրանքի համար տրված սերտիֆիկատի պատճենը.

2) պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).

3) հաշիվ-ապրանքագրի և վճարման անդորրագրի պատճենները.

4) տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի.

5) այլ տեղեկություն՝ դիմողի ցանկությամբ:

9. Սուբյեկտն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիության համար:

10. Սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերի բացակայության կամ պահանջներին չհամապատասխանելու դեպքում հիմնադրամը սուբյեկտից պահանջում է անհրաժեշտ փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկատվություն:

11. Հիմնադրամը հայտն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով սուբյեկտին տեղեկացնում է հայտի

բավարարման մասին՝ նշելով փոխհատուցման գումարի չափը, կամ մերժման մասին՝ հիմնավորելով մերժումը: Մերժման հիմք կարող է հանդիսանալ սույն կարգի 6-րդ կետում նշված փաստաթղթերի բացակայությունը կամ պահանջներին չհամապատասխանելը:

12. Սուբյեկտը կարող է բողոքարկել հիմնադրամի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով:

13. Ներկայացված փաստաթղթերը սույն կարգի պահանջներին համապատաս-խանելու և հայտի բավարարման դեպքում հիմնադրամը գումարը փոխանցում է սուբյեկտի բանկային հաշվին՝ 5 բանկային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

_____
(հիմնադրամի մարզային մասնաճյուղի կամ ներկայացուցչության անվանումը)

_____
(սուբյեկտի անվանումը)

Գտնվելու վայրը, հեռախոսահամարը _____

_____

Բանկային վավերագիր_____

_____

ՀԱՅՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 50 ՏՈԿՈՍՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ, համաձայն Հայաստանի Հանրապետությունում գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների ապրանքների համապատասխանության սերտիֆիկացման պետական փոխհատուցման կարգի, փոխհատուցել արտադրանքի սերտիֆիկատ տալու համար կատարված ծախսը՝ 50 տոկոսի չափով:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) սերտիֆիկատի պատճենը.
2) պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).
3) հաշիվ-ապրանքագրի և վճարման անդորրագրի պատճենները.
4) տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի.
5) այլ տեղեկատվություն՝ դիմողի ցանկությամբ:

Առդիր՝ _____ էջ:

Տնօրեն _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____20 թ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ ԳԵՐՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ

(կազմակերպության անվանումը) ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտի միջին ցուցակային թիվը	Հայտը ներկայացնելուն նախորդող տարվա գործունեությունից ստացված հասույթը (մլն դրամ)	Հայտը ներկայացնելուն նախորդող տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը (մլն դրամ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ապրանքի անվանումը	ԱՏՏԳԱԱ-ի ծածկագիրը	Արտահանվող երկիրը	Խմբաքանակը	Ապրանքի նկարագիրը	Սերտիֆիկացված ապրանքի արտահանվող խմբաքանակի արժեքը (մլն դրամ)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 4-ի N 1136 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Բաժինը	Խումբը	Դասը	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
				ինն ամիս	տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ		
			այդ թվում՝		
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	(10000.0)	(10000.0)
			08. Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագիր	(10000.0)	(10000.0)
			ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	(10000.0)	(10000.0)
			ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
			ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
			ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
			Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	(10000.0)	(10000.0)
			այդ թվում՝		
			Այլ ընթացիկ դրամաշնորհներ	(10000.0)	(10000.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	10000.0	10000.0
			այդ թվում՝		
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	10000.0	10000.0
			այդ թվում՝		
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	10000.0	10000.0
			այդ թվում՝		
			01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	10000.0	10000.0
			ՀՀ կառավարություն	10000.0	10000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

11_1136.doc